
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՆԳԱՊՈՒՐՈՒՄ

ՆՈՒՐԲԵԿՅԱՆ Լ. Զ.

XX դ. վերջին աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով որոշ երկրներ, տնտեսական աննախադեպ զարգացում ապրելով, կանգնեցին առաջատար պետությունների կողքին: Այս առումով հզոր պետությունների կողքին պատվավոր տեղ են գրավում նաև փոքր երկրները, որոնց թվին է պատկանում քաղաք-պետություն Մինգապուրի Հանրապետությունը: Վերջինս ունի ընդամենը 719,1 քառ. կմ տարածք¹, չունի գյուղական բնակչություն, բնական պաշարներ և ստիպված է ներկրել խմելու ջուրը: Մինգապուրի թերևս միակ առավելությունը աշխարհագրական դիրքն է, քանի որ գտնվում է ծովային առևտրական ուղիների խաչմերուկում:

Եթե 1965 թ. Մինգապուրն իր տնտեսական ցուցանիշներով գտնվում էր Չիլիի, Արգենտինայի և Մեքսիկայի հետ նույն մակարդակի վրա և համարվում էր “երրորդ աշխարհի” պետություն, ապա այսօր բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի մակարդակով նշված երկրներից այն առաջ է անցել հինգ անգամ: Մինգապուրի ՀՆԱ-ն հասել է 136 մլրդ դոլարի: Բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտների մակարդակով /տարեկան 45 հազ. դոլար/ դասվում է համաշխարհային լիդերների շարքին²:

Մինգապուրն առաջատար դիրքեր է գրավում համակարգչային տեխնոլոգիաների, բիոտեխնոլոգիաների, բժշկական սարքավորումների արտադրության և բարձր տեխնոլոգիաների զարգացման ոլորտներում: Երկրում օտարերկրյա կապիտալի ներդրումների մակարդակով զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով Շվեյցարիային, իսկ ցածր հարկերի մակարդակով զիջում է միայն Դուբային: Կոռուպցիայի և հանցագործության տոկոսը Մինգապուրում ամենացածրն է:

Վերջին տարիներին մեծացել է հետաքրքրությունը արագացված արդիականացում իրականացրած Հարավարևելյան Ասիայի երկրների նկատմամբ, որոնք ավանդականից անցում են կատարել դեպի արդյունաբերական հասարակություն:

Եթե մինչև 1990-ական թթ. տեսաբանները համոզված էին, որ առաջատար կարող են լինել միայն լիբերալ վարչակարգեր ունեցող պետությունները, ապա 2000-ական թթ. նման պնդումը դրվեց մեծ հարցականի տակ: Բանն այն է, որ ավտորիտար և ամբողջատիրական վարչակարգեր ունեցող մի շարք երկրներ կարողացան, տեխնոլոգիական և գիտական թռիչք

¹ Տե՛ս *Малая энциклопедия стран/Н. Г. Сиротенко, В. А. Менделев, Харьков, 2000, с. 343.*

² Տե՛ս *Бюллетень иностранной коммерческой информации, N 28, 13.III. 2007, с. 4.*

ապահովելով, մարտահրավեր նետել արևմտյան ժողովրդավարությանը: Խոսքը ՉԺՀ-ի, Հարավային Կորեայի և Մինգապուրի մասին է:

Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում քաղաքական համակարգի զարգացման ճանապարհները տարբեր են և բազմազան: Որոշ պետություններ ունեն ամբողջատիրական (Բրունեյ), ավտորիտար Թաիլանդ, Մալայզիա), ժողովրդավարական (Արևելյան Թիմոր), իսկ որոշ պետություններ (Լաոս, Վիետնամ)՝ սոցիալիստական կողմնորոշում: Մյանմայի Միությունը, Կամբոջայի թագավորությունը և Ինդոնեզիան անցել են ռազմական-ամբողջատիրական և ռազմական-ավտորիտար վարչակարգերի բարդ ուղին: Այդուհանդերձ, ավտորիտարիզմը այն ուժն էր, որը խթանեց այդ երկրներում արդյունաբերականացման գործընթացը, սակայն չլուծեց քաղաքական արդիականացման խնդիրը³: Քաղաքական արդիականացման գործընթացը Մինգապուրում նույնպես ուղեկցվում էր «կոշտ» քաղաքականությամբ՝ ավտորիտար մեթոդների կիրառմամբ: Սակայն ներկայումս Մինգապուրը, Մալայզիան և Ֆիլիպիններն ունեն ազատական-ժողովրդավարական վարչակարգ:

Քաղաքական արդիականացման տեսաբանների կարծիքով, մի շարք երկրներում, այդ թվում և Մինգապուրում արդիականացում իրականացնողը քաղաքական իշխանությունն էր: Ս. Հանթինգտոնը այդ գործընթացը բնորոշում էր որպես ժողովրդավարացման «երրորդ ալիք»⁴, որը միշտ չէ, որ կարող էր հանգեցնել ժամանակակից ժողովրդավարության հաստատմանը: Այդ պատճառով էլ որոշ տեսաբաններ առաջարկում են օգտագործել «ժողովրդավարական տրանզիտ» հասկացությունը, որն անորոշ արդյունքներով գործընթաց է և չի ենթադրում անպայման անցում ժողովրդավարության: Յան Դերբիշայրը Կամբոջան, Ինդոնեզիան և Թաիլանդը դասում է «երիտասարդ ժողովրդավարական» պետությունների թվին, որոնք իրենց հիմնական գծերով նման են ազատական-ժողովրդավարությանը, սակայն այստեղ բացակայում է քաղաքական համակարգի կայունությունը⁵:

Մինգապուրի Հանրապետությունը տնտեսական գլոբալացման համաշխարհային գործընթացի, ժամանակակից պետականության կայացման և ժողովրդավարության զարգացման վառ օրինակ է: Մինգապուրյան տնտեսական «հրաշքի» հայրն իրավամբ համարվում է երկրի առաջին վարչապետ Լի Կուան Յուն (1959-1990 թթ.): Օգտագործելով Արևմտյան Եվրոպայի առաջատար երկրների փորձը՝ նա կարողացավ պատմական չափանիշներով շատ կարճ ժամանակահատվածում «երրորդ աշխարհի» հետամնաց երկիրը վերածել առաջատար, ծաղկուն և բարեկեցիկ պետության:

³Տե՛ս Вятр Е. Социология политических отношений, М., 1979, с. 291.

⁴Տե՛ս Huntington S.P. The Third Wave: Democratization in the Late Twentieth Century, Norman, L., 1991, p. 58.

⁵Տե՛ս Дербишайр Дж., Дербишайр Я. Политические системы мира: в 2 томах, т. 1, М., 2004, с. 30.

Հրաժարվելով Արևմտյան Եվրոպայի պետություններին բնորոշ լիբերալ-ժողովրդավարության սկզբունքներից՝ Մինգապուրի իշխանությունները շեշտը դրեցին ուժեղ ազգային առաջնորդի գլխավորությամբ ավտորիտար մոդելի զարգացման վրա: Հաշվի առնելով Մինգապուրի բնակչության պատերնալիստական մտածելակերպը՝ նման մոդելի ընտրությունը բավական արդյունավետ էր: Ուժեղ և խարիզմատիկ առաջնորդ Լի Կուան Յուն դարձավ օխլոկրատիայի և քաղաքական վերնախավի ներսում հակասությունները զսպող ուժեղ քաղաքական կամք արտահայտողը:

Մինգապուրն անցել է “հետապնդող” քաղաքական արդիականացման ուղիով, որտեղ տնտեսության զարգացումը չէր զուգակցվում քաղաքական համակարգի ազատականացմանը: Բացի այդ, քաղաքական կյանքում մեծ ազդեցություն են ունեցել կրոնը և ազգային հիմնախնդիրները:

Կարելի է առանձնացնել Մինգապուրի քաղաքական զարգացման գործընթացի երեք փուլ.

1. 1965-1970 թթ. –բնութագրվում է ղեկավարող կուսակցության ձեռքում իշխանության կենտրոնացմամբ և ավտորիտար վարչակարգի հաստատմամբ:

2. 1970-1990 թթ. – միակուսակցական խորհրդարանական ժողովրդավարության հաստատման ժամանակաշրջան:

3. 1990-ից մինչ օրս, երբ տեղի է ունենում ժողովրդավարությանն աստիճանաբար անցնելու գործընթացը:

Առաջին փուլի ռազմավարական հիմնախնդիրը “քաղաքական գոյատևումն” էր, որը հանգեցրեց ավտորիտար վարչակարգի հաստատմանը: Պետությունը և ղեկավարող կուսակցությունը ստիպված էին միջամտել հասարակական կյանքի բոլոր ոլորտներին: Հստակեցվեցին ավտորիտար մոդելի զարգացման հիմնական ուղղությունները՝

1. Մերժել կոմունիստական գաղափարախոսությունը:

2. Իշխանությունը կենտրոնացնել իշխող կուսակցության ձեռքում:

3. Ներգործել հասարակության լայն զանգվածների գիտակցության վրա:

4. Սահմանափակել քաղաքական ընդդիմության գործունեությունը:

5. Արգելել գործադուլները:

Մինգապուրում ավտորիտարիզմի հաստատումը պատահական չէր: Ինքնին նոր պետության ձևավորումը և նրա կայացման պայմանները թույլ զարգացած տնտեսական և քաղաքական հիմքի վրա նպաստեցին դրա զարգացմանը:

1970-ական թթ. սկզբին Մինգապուրը մուտք գործեց զարգացման երկրորդ փուլ: Երկրում ծավալվեց լայնամասշտաբ արդյունաբերացման ծրագիր, խնդիր դրվեց արդյունաբերությունը վերակողմնորոշել դեպի արտաքին շուկա՝ արտահանվող արտադրանքի ընդլայնման միջոցով: Միաժամանակ, լուծվեցին ազգային և սոցիալական խնդիրներ: Այս փուլի

վերջին շրջանում փոխվեց նաև կուսակցությունների դերը: Ի հայտ եկան ընդդիմադիր կուսակցություններ, բարելավվեցին աշխատանքի պայմանները, բարձրացավ բնակչության կենսամակարդակը: Երկրում հաստատվեց “չափավոր” ժողովրդավարություն:

1990 թ. նոր սերնդի առաջնորդների՝ իշխանության գլուխ գալով Մինգապուրում սկսվում է քաղաքական գործընթացների զարգացման երրորդ փուլը: Քաղաքական և տնտեսական զարգացման նոր պետական ռազմավարությունը միտված էր բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, ժողովրդավարության ամրապնդմանն ու հետագա զարգացմանը: Հարկ է նշել, որ այսօր սինգապուրյան հասարակությունը կառուցվածքային կերպով փոխման է ենթարկվել, որում հատուկ դերակատարություն են ստացել պետական և բյուրոկրատական համակարգին ինտեգրված տեխնոկրատները: Երկրում ձևավորվել է նաև ազդեցիկ միջին խավ, ինչպես նաև բարձր կրթական մակարդակ ունեցող սերունդ, որը կազմում է սինգապուրյան հասարակության առավել ակտիվ մասը:

Մինգապուրում գոյություն ունի եվրոպական տիպի բազմակուսակցական համակարգ, որտեղ իշխող կուսակցությունը “Ազգային գործողության կուսակցությունն” է /ԱԳԿ/: Այն ձևավորվել է 1954 թ., հիմնված է խիստ հիերարխիայի սկզբունքի վրա և բարձր կազմակերպվածություն ունեցող քաղաքական կառույց է: Բացի ԱԳԿ-ից, Մինգապուրում գոյություն ունեն նաև 24 պաշտոնապես գրանցված կուսակցություններ⁶: Ղեկավարող կուսակցության դիրքերն այսօր էլ բավականին ամուր են: Դա պայմանավորված է նրանով, որ պրագմատիկ սինգապուրցիների կարծիքով, ղեկավարող կուսակցությունը բավականաչափ բանիմաց է և ունի համապատասխան փորձ, անհրաժեշտ պաշարներ երկրի հետագա զարգացման ճանապարհին դժվարությունները հաղթահարելու համար: Մինգապուրի քաղաքական վերնախավը կարողացել է հաջողությամբ կենսագործել քաղաքացիների նյութական բարեկեցության, քաղաքական կայունության և անվտանգության հիմնախնդիրները՝ դրա փոխարեն ստանալով ժողովրդի վստահությունը:

Նման պայմաններում ընդդիմության գործունեության համար քաղաքական տարածությունը նկատելիորեն սահմանափակված է և երկրի քաղաքական կյանքում չունի նկատելի ազդեցություն⁷:

1990 թ. Մինգապուրի վարչապետ Լի Կուան Յուն, վստահ լինելով, որ սինգապուրյան հասարակության զարգացման հիմնական խնդիրներն իրականացված են, իշխանությունը փոխանցում է նոր սերնդի առաջնորդներին՝ Գո Չոկ Տոնգի գլխավորությամբ: Երիտասարդ բարենորոգիչները

⁶ <http://mgimo.ru/about/news/experts/chto-budet-s-nbsp-edinorogom/>

⁷ Տե՛ս Գրևիչ Յ.Մ. *Партия народного действия Сингапура: 50 лет у власти (Юго-Восточная Азия: актуальные проблемы развития, т. 14, 2010, с. 259).*

մշակեցին նոր պետական ծրագիր, որտեղ կարևորվում էին հետևյալ ուղղությունները.

- նոր գաղափարախոսության մշակում,
- տնտեսության հետագա զարգացում,
- բանկային գործի կատարելագործում,
- կրթության արդիականացում,
- կոռուպցիայի դեմ հետևողական պայքարի իրականացում:

Նշված ուղղություններից երկրի համար կարևորվում էր հատկապես տնտեսության զարգացումը: Լի Կուան Յուի կառավարության տնտեսության զարգացման ռազմավարությունը հիմնված էր Մինգապուրը Հարավարևելյան Ասիայի ֆինանսական և առևտրային համաշխարհային կենտրոնի վերածելու, ինչպես նաև օտարերկրյա ներդրողների ներգրավման վրա: “Մենք ողջունում էինք յուրաքանչյուրին, ով ցանկանում էր ներդրում կատարել մեր երկրում,-գրում էր Լին, - արդյունքում ամերիկյան անդրազգային կորպորացիաները հիմք դրեցին բարձր տեխնոլոգիական արտադրությանը՝ Մինգապուրը դարձնելով էլեկտրոնիկա արտադրող պետություն”⁸:

Մինգապուրի հետագա քաղաքական զարգացումը կապված էր հասարակության ժողովրդավարացման հետ: Վերջին տարիներին պետության ռազմավարությունն ուղղված էր ժողովրդավարության կատարելագործմանը, հասարակության սոցիալական ամբողջականության ամրապնդմանը, միասնական սինգապուրյան ազգի ձևավորմանը, տնտեսության հետագա զարգացմանը, կրթության արդիականացմանը, կոռուպցիայի դեմ շարունակական պայքարին:

Այսօր Մինգապուրը մուտք է գործել տնտեսության զարգացման բարձրագույն փուլ, որին բնորոշ է գլոբալացումը: Տնտեսական արդիականացումը Մինգապուրում ուղեկցվում է կյանքի մակարդակի բարձրացմամբ և կրթության, առողջապահության, հասանելի բնակարանների կառուցման բարելավմամբ, ինչը հնարավորություն տվեց խուսափելու սոցիալական բախումներից և պահպանելու քաղաքական կայունություն⁹:

Երկար ժամանակ քաղաքական վերնախավի դիրքերի ամրապնդմանը նպաստեց այն, որ քաղաքական պրակտիկայում փաստացի հաստատվեց մերիտոկրատական հասարակության հայեցակարգը, որտեղ ղեկավար պաշտոնները զբաղեցնում էին ոչ թե “խնամի-ճանոթ-բարեկամ” մեզ շատ հայտնի սկզբունքով, այլ մասնագիտական բարձր որակավորում ունեցող տաղանդավոր անձինք՝ անկախ էթնիկ պատկանելությունից և սոցիալական ծագումից:

Դեռևս 1980-ական թթ. կառավարությունն իր ուշադրությունը կենտրոնացրեց բյուրոկրատիայի “որակի” վրա: Քաղաքական առաջնորդ-

⁸Տե՛ս Լի Կուան Կու. *Сингапурская история: из третьего мира в первый*, М., 2005, с. 44.

⁹Տե՛ս Գյուրևիչ Յ.Մ., նշվ. աշխ., էջ 257:

ների և պետական ծառայողների շրջանում կոռուպցիան սկսեց նվազել աշխատավարձերի բարձրացմանը զուգընթաց: “Կոռուպցիան ասիական կենսաձևի անքակտելի մասն է կազմում,- գրում է Լին, - մարդիկ բացահայտ ընդունում էին “պարզները”, որը նրանց կյանքի մի մասն էր”¹⁰: Կոռուպցիայի դեմ պայքարը սկսվեց օրենքների հստակեցումից և պարզեցումից: Միաժամանակ, բարձրացվեց պետական ծառայողների աշխատավարձը: Լի Կուան Յուի կարծիքով, պետական աշխատողների բարձր աշխատավարձը (25000-30000\$) հիմնավորված էր նրանով, որ ցածրի դեպքում ինչպիսի պետական ծառայողները կգնային աշխատելու մասնավոր սեկտոր, իսկ թույլերը կմնային և կզբաղվեին կոռուպցիայով¹¹: Դրա դեմ պայքարն անհրաժեշտ էր նաև արտաքին ներդրումների ծավալը մեծացնելու տեսանկյունից: Բացի այդ, մերիտոկրատիան Մինգապուրում քարոզվում էր պետական մակարդակով՝ սկսած դպրոցից մինչև ինստիտուտ: Խելացի երիտասարդներին պետությունն ուղարկում էր սովորելու եվրոպական ճանաչված համալսարաններ, որտեղից նրանք վերադառնալով համարում էին բյուրոկրատական ապարատը: Այսպես պետական ապարատը թարմանում էր ճիշտ դաստիարակված և բարձր որակավորում ունեցող կադրերով:

Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի շնորհիվ այսօր Մինգապուրը գտնվում է աշխարհի ոչ կոռումպացված երկրների հնգյակում՝ 10-բալանոց վարկանշային համակարգում ստանալով 9,1 բալ¹²: Մինգապուրում կոռուպցիայի դեմ պայքարը հիմնված էր հետևյալ սկզբունքների վրա.

- կոռուպցիայի դեմ պայքարի միջոցները կիրառվում էին և՛ կաշառք սովորողների, և՛ վերցնողների նկատմամբ,
- կաշառակերության համար պատժվում էին վարչական և քրեական կարգով,
- մեծ ուշադրություն էր դարձվում օրենքների գերակայության ամրապնդմանը,
- կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոց էին հա-մարվում հստակ և պարզ որոշումներն ու աշխատանքի մեթոդները,
- առաջնորդներն իրենց անձնական օրինակով և անթերի վարքագծով օրինակ էին ծառայում ժողովրդին,
- պետական պաշտոնները շնորհվում էին մասնագիտական բարձր հասկանիչների տեր անձանց,
- ստեղծվել էին ազնվության սկզբունքով արդյունավետ աշխատող և իրենց աշխատանքին նվիրված՝ կոռուպցիայի դեմ պայքարող մարմիններ,

¹⁰ Տե՛ս Լի Կուան Կու., նշվ. աշխ., էջ 87:

¹¹ Տե՛ս Կուրակին Ա.Վ., Դյորին Վ.Ա., Տավոստին Ա.Ա. *Международные, европейские и национальные аспекты борьбы с коррупцией в системе государственной службы РФ (Право и политика, М., 2005, N 8, с. 2-3).*

¹² <http://2006.novayagazeta.ru/nomer/2006/78n/n78n-s28.shtml>

- համակարգային պայքար էր մղվում վարչարարության և թղթարարության դեմ,

- ապահովվում էր պաշտոնյաների եկամուտների աղբյուր-ների թափանցիկությունը:

Այսպիսով, սկզբնապես ընտրելով շուկայական տնտեսության արևելյան-ասիական մոդելը՝ Մինգապուրը տնտեսական առաջընթաց ապահովելուց հետո միայն աստիճանաբար անցում կատարեց քաղաքական արդիականացման: Մեր համոզմամբ, սինգապուրյան արդիականացումն ունի երկու հիմնական առանձնահատկություն.

- այն զարգանում է որպես օրենքների վրա հիմնված բաց հասարակություն,

- զարգացման իրավական հիմքերը զուգակցված են սեփական սոցիոմշակութային համակարգի առանձնահատկություններով:

Հարկ է նշել, որ Մինգապուրի ներկա կառավարությունը Լի Սյան Լուի գլխավորությամբ /վերջինս Լի Կուան Յուի ավագ որդին է/ մշակել է պետական նոր ծրագիր, որն ուղեկցվում է կուսակցական և քաղաքական համակարգերի վերակառուցմամբ, իսկ սահմանադրական բարեփոխումները հռչակում են ժամանակակից իրավական պետության հիմնարար սկզբունքները: Ժողովրդավարացման գործընթացը, այնուամենայնիվ, երկրում իրականացվում է՝ ելնելով արևելյան ավանդույթներից, վերահսկվում է վերևից և միահյուսված է ավանդական կոնֆուցիական քաղաքական մշակույթի հետ: Վերջինիս բարոյականության ազդեցության ներքո ձևավորված կարգապահությունը, աշխատասիրությունը, կրթության կարևորումը, փոխհամաձայնության և սոցիալական խաղաղության ձգտումը, զուգակցվելով առաջատար երկրների փորձի, գիտելիքների, տեխնոլոգիաների և կապիտալի հետ, ոչ միայն քաղաք-պետության զարգացման մոդելին տվեցին ինքնատիպություն, այլև մեծ ներդրում ունեցան զարգացման ընդհանուր ռազմավարության իրականացման գործում:

Նոր մոդելում առաջնահերթությունների փոփոխությունը թելադրված էր ոչ միայն երկիրն անկումից արագ հանելու անհրաժեշտությամբ: Ինչպես նշում են փորձագետները, վերջին տարիներին տնտեսական աճը ապահովվում է ոչ այնքան մասնագիտական պատրաստվածության, որքան ներքին աշխատաշուկա օտարերկրյա աշխատուժի ներգրավման շնորհիվ:

Տնտեսական աճի նոր մոդելի իրականացումը, ըստ նրա հեղինակների, պետք է՝

- ուժեղացնել Մինգապուրի մրցունակությունը համաշխարհային շուկայում,

- պահպանել Մինգապուրի՝ որպես առաջատար պետության կարգավիճակը Հարավարևելյան Ասիայում,

- սեփական, թույլ մրցունակ ընկերությունները տեղափոխել առավել էժան աշխատուժ ունեցող տարածաշրջաններ՝ մասնավորապես Վիետնամ,

- հաղթահարելը կախվածությունը աշխատանքային միզրանտներից,
- նկատելիորեն բարձրացնել սինգապուրցիների աշխատավարձը և կյանքի մակարդակը:

Ներկայումս բիզնեսը խթանելու համար կառավարությունն աննախադեպ իջեցրել է նորարարական տեխնոլոգիաների, գիտական հետազոտությունների, բանվորների վերապատրաստման ոլորտում կապիտալ ներդրումների հարկերը: Դա է պատճառը, որ Սինգապուրը համարվում է ամենաբարենպաստ ներդրումների քաղաքականություն իրականացնող երկիր: 2009 թ. մրցունակության մակարդակով այն գրավում է 3-րդ տեղը Շվեյցարիայից և ԱՄՆ-ից հետո՝ առաջ անցնելով Շվեդիայից և Դանիայից: Մեր կարծիքով, դա խոսում է այն մասին, որ չնայած 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամին՝ երկրի ղեկավարության բանիմացության, փորձառության և քաղաքական կամքի շնորհիվ՝ Սինգապուրը առանց լուրջ ցնցումների կարողացավ հաղթահարել դժվարությունները:

Ինչ վերաբերում է քաղաքական համակարգին, ապա կարելի է վստահաբար ասել, որ այսօր էլ այն միայն արտաքնապես է նմանվում արևմտյան ազատական-խորհրդարանական ժողովրդավարությանը, չնայած, որ առկա են ազատ և արդար ընտրություններ, ընդդիմադիր կուսակցություններ, օրենքի առջև բոլորի հավասարություն և այլն: Սինգապուրյան ժողովրդավարության հիմնական տարբերիչ գծերն են՝

- ԱԳԿ-ն շարունակում է մնալ ղեկավարող քաղաքական կուսակցություն, որն օժտված է կառավարման բացառիկ փորձով:

- Շուկայական տնտեսության առկայության պայմաններում պետությունը վերահսկում և կարգավորում է ժողովրդական տնտեսության հիմնական ոլորտները:

- Առկա է կառավարման մարմինների աշխատանքի բարձր արդյունավետություն:

- Ճիշտ մտածված կրթական համակարգի շնորհիվ ապահովվում է ընդունվող որոշումների մասնագիտական բարձր մակարդակը:

- Էթնիկ խտրականության բացակայությունը նպաստում է հասարակության կայունությանը:

- Քաղաքական կյանքում շարունակում է մեծ ազդեցություն ունենալ կոնֆուցիականությունը, որը կարևորում է մարդկային շփումը, կարգապահությունը և համաձայնության ձեռքբերումը:

Այսպիսով, Սինգապուրն արդեն մի քանի տասնամյակ գնում է զարգացման իր սեփական ուղիով՝ հաշվի առնելով ազգային, կրոնական, մշակութային առանձնահատկությունները և դրանք համադրելով տնտեսական առաջընթացի և ավանդական բարոյական արժեքների հետ: Քաղաքական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն իրականացվում են աստիճանաբար՝ չխախտելով գոյություն ունեցող իշխանության համակարգը: Սինգապուրի տնտեսության զարգացման համար եկամուտները

հիմնականում ձևավորվում են բանկային, բժշկական, հյուրանոցային, կրթական և այլ ծառայություններից: Կարծում ենք, որ Հայաստանն այս առումով Մինգապուրի փորձն ընդօրինակելու անհրաժեշտություն ունի: Մինգապուրցիները համոզված են, որ երկրի զարգացման համար կարևորը կայունությունն է և արդյունավետ գործող կառավարությունը: Կայունությունն անհրաժեշտ է այնքանով, որքանով ներդրողները ցանկանում են աշխատել կանխատեսելի միջավայրում, իսկ արդյունավետ աշխատող, չկոռումպացված կառավարությունը վստահություն է ներշնչում ապագայի հանդեպ: Ժամանակակից, մրցունակ, զարգացած և հարուստ երկիր կառուցելու համար հարկ է ունենալ արդար կառավարում, կարգապահ քաղաքացիներ, զարգացած ենթակառուցվածքներ, բարձր հավակնություններ և մեծ երազանք՝ Մինգապուրի դեպքում արդեն դարձած իրականություն:

ОСОБЕННОСТИ ПОЛИТИЧЕСКОЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МОДЕРНИЗАЦИИ В СИНГАПУРЕ

НУРБЕКЯН Л. З.

Резюме

В условиях отсутствия сельского населения и природных ресурсов Сингапуру удалось за сравнительно короткий исторический отрезок из страны третьего мира превратиться в развитую страну и занять передовое место в области компьютерных технологий, биотехнологий, производства медицинского оборудования и в развитии хайтека.

FEATURES OF POLITICAL AND ECONOMIC MODERNIZATION IN SINGAPORE

L. NURBEKYAN

Abstract

Singapore was able to become a first world country during a quite short, in historical standards, period of time, even though it has neither rural population, nor natural resources. Singapore was also able to take a leading place in fields of computer technology, biotechnology, and medical equipment and hi-tech development.